**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

«09» օգոստոսի 2023թ. N 45 -Լ

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆՈՎ (ՄԻՆՉԵՎ 2035 ԹՎԱԿԱՆԸ) ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2023-2035 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի թիվ 730-Լ որոշման 3-րդ կետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 659-Լ որոշման 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության գործողությունների պլանով (մինչև 2035 թվականը) սահմանված միջոցառումների 2023-2035 թվականների արդյունքային շրջանակը՝ համաձայն հավելվածի:

8/9/2023

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Signed by: SANOSYAN GNEL 1710830069

**ՆԱԽԱՐԱՐ՝** **Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

**ք. Երևան**

Հավելված
ՀՀ ՏԿԵ նախարարի 2023 թվականի
Օգոստոսի 9-ի N 45–Լ հրամանի

## Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության գործողությունների պլանով (մինչև 2035 թվականը) սահմանված միջոցառումների 2023-2035 թվականների արդյունքային շրջանակը

**Ռազմավարական նպատակ 1. Երկրաբանական միասնական թվային տեղեկատվական շտեմարանի ստեղծում և վարում**

| N | Միջոցառումները | Գործողություններ | Ակնկալվող վերջնական արդյունքը | Կատարող(ներ)ը | Վերջնաժամկետ |
|---|---|---|---|---|---|
| Թիրախային ուղղություն 1.1. Առկա երկրաբանական տեղեկատվության կոնսոլիդացում և երկրաբանական միասնական թվային տեղեկատվական շտեմարանի (այսուհետ՝ Շտեմարան) ստեղծում և վարում՝ հանքավայրերի և հանքերևակումների պետական կադաստրի, պաշարների պետական հաշվեկշռի և պաշարների տարեկան շարժի առցանց արտացոլմամբ | | | | | |
| 1.1 | Օգտակար հանածոների (հանքային ռեսուրսների)՝ մետաղական, պինդ ոչ մետաղական, ստորերկրյա քաղցրահամ և հանքային ջրերի, պետական կադաստրի (ՕՀՊԿ) և օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի (ՕՀՊՀ) վարման, երկրաբանական տեղեկատվության հավաքագրման և մշակման, պաշարների շարժի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման համար իրավական հենքի ստեղծում | 1. Նորմատիվ իրավական ակտերի մշակում, որոնցով կսահմանվեն ՕՀՊԿ-ի և ՕՀՊՀ-ի վարման, հանքավայրերի և հանքերևակումների անձնագրերի կազմման երկրաբանական տեղեկատվության հավաքագրման և մշակման, պաշարների շարժի վարման, հանքավայրերի և տեղամասերի անվանակարգման (անվանակոչման), պաշարների շարժի վերաբերյալ էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման, ավտոմատ կառավարման տեղեկատվական համակարգերի (այսուհետ՝ ԱԿՏՀ) ներդրման իրավակարգավորումները: | Երկրաբանական միասնական թվային տեղեկատվական շտեմարանի ստեղծման և վարման համար իրավական հենքի առկայություն | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Կադաստրի կոմիտե | 2025 թվականի փետրվարի 2-րդ տասնօրյակ |
| 1.2 | Օգտակար հանածոների (հանքային ռեսուրսների) պետական կադաստրի և պաշարների պետական հաշվեկշռի վարման ավտոմատ կառավարման տեղեկատվական համակարգերի ստեղծում | 1. Օգտակար հանածոների (հանքային ռեսուրսների) պետական կադաստրի և պաշարների պետական հաշվեկշռի վարման ԱԿՏՀ-ի ստեղծման տեխնիկական առաջադրանքի կազմում,<br>2. Օգտակար հանածոների (հանքային ռեսուրսների) պետական կադաստրի և պաշարների պետական հաշվեկշռի վարման ԱԿՏՀ-ի ստեղծում և գործարկում | 1. Տեխնիկական առաջադրանքի առկայություն<br>2. Էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի առկայություն | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Կադաստրի կոմիտե | 1. 2025 թվականի փետրվարի 2-րդ տասնօրյակ<br>2. 2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1.3 | Օգտակար հանածոների հանքավայրերի և հանքերևակումների թվային բազային հենքի ստեղծում. | Հանրապետական երկրաբանական ֆոնդում առկա՝ օգտակար հանածոների հանքավայրերի և հանքերևակումների վերաբերյալ տեղեկատվության թվայնացում և ստեղծված տեղեկատվական համակարգերում մուտքագրում | Օգտակար հանածոների առավել քան 950 հանքավայրերի և հանքավայր(եր)ի աշխարհագրորեն առանձնացված տեղամասերի (այդ թվում՝ մետաղական, պինդ ոչ մետաղական, ստորերկրյա քաղցրահամ և հանքային ջրերի), ինչպես նաև 578 հանքերևակումների թվայնացված բազայի առկայություն | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Կադաստրի կոմիտե | 2026 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| 1.4 | Ընդերքօգտագործման իրավունքների տեղեկատվական բազային հենքի ստեղծում | 1. Ընդերքօգտագործման իրավունքների ԱԿՏՀ-ի ստեղծման տեխնիկական առաջադրանքի մշակում,<br>2. Ընդերքօգտագործման իրավունքների ԱԿՏՀ-ի ստեղծում և գործարկում,<br>3. Ընդերքօգտագործման իրավունքների (գործող և դադարեցված, ժամկետներն ավարտված) վերաբերյալ տեղեկատվության թվայնացում և ԱԿՏՀ մուտքագրում | Շուրջ 1000 ուսումնասիրության և արդյունահանման ընդերքօգտագործման իրավունքների վերաբերյալ թվայնացված բազայի առկայություն, տվյալների պարբերաբար թարմացում և հասանելիություն պետական կառավարման մարմիններին | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Կադաստրի կոմիտե | 1.2025 թվականի փետրվարի 2-րդ տասնօրյակ<br><br>2.2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ<br><br>3.2026 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| 1.5 | Պաշարների շարժի վերաբերյալ էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման համակարգի ստեղծում | 1. Օգտակար հանածոների պաշարների վիճակի փոփոխության (շարժի) վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային առցանց համակարգի ստեղծման տեխնիկական առաջադրանքի մշակում,<br>2. Էլեկտրոնային առցանց համակարգի ստեղծում և գործարկում, | 1. Տեխնիկական առաջադրանքի առկայություն,<br>2. Պաշարների շարժի վերաբերյալ էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման համակարգի առկայություն (տարեկան շուրջ 400 հաշվետվության ընդունում առցանց համակարգով) և ՕՀՊՀ-ի ԱԿՏՀ-ի հետ փոխգործելիության ապահովում: | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Կադաստրի կոմիտե | 1. 2025 թվականի փետրվարի 2-րդ տասնօրյակ<br>2. 2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| 1.6 | Երկրաբանական տեղեկատվության թվային համակարգի ստեղծում | 1. Երկրաբանական տեղեկատվության թվային համակարգի ստեղծման տեխնիկական առաջադրանքի մշակում,<br>2. Երկրաբանական տեղեկատվության թվային համակարգի ստեղծում և գործարկում,<br>3. Հանրապետական երկրաբանական ֆոնդում առկա ՀՀ-ի երկրաբանության վերաբերյալ տեղեկատվության թվայնացում | 1. Տեխնիկական առաջադրանքի առկայություն,<br>2. Երկրաբանական տեղեկատվության թվայնացման, մշակման և համակարգման ԱԿՏՀ-ի առկայություն<br>3. ՀՀ-ի երկրաբանության վերաբերյալ թվայնացված և համակարգված տեղեկատվությամբ ԱԿՏՀ-ի առկայություն | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Կադաստրի կոմիտե | 1. 2025 թվականի փետրվարի 2-րդ տասնօրյակ<br><br>2. 2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ<br><br>3. 2026 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| 2. | Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի | Ֆոնդային նյութերի ուսումնասիրություն (50 հատ), | ՀՀ ստորերկրյա հանքային ջրերի | Տարածքային | 2023 թվականի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | հորատանցքերի և աղբյուրների գույքագրում | ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի ջրակետերի (հորատանցք, աղբյուր) գույքագրում և տեխնիկական վիճակի ուսումնասիրում (100 ջրակետ)<br>Իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվության կազմում | (օգտակար հանածոների) պետական հաշվեկշռի վարման գործընթացի արդյունավետության բարձրացում և հանքային ջրերի հանքավայրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության առկայություն | կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն («ՀԵՖ» ՊՈԱԿ) | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| 3. | Ընդերքօգտագործման ոլորտում մեկ ներքին միասնական հարթակի ստեղծում | Մշակել, ներդնել և գործարկել ընդերքօգտագործման ոլորտում մեկ ներքին միասնական հարթակը:<br>1. Ընդերքօգտագործման ոլորտում մեկ ներքին միասնական հարթակի ստեղծման տեխնիկական առաջադրանքի մշակում,<br>2. Ընդերքօգտագործման ոլորտում մեկ ներքին միասնական հարթակի ստեղծում, գործարկում և փոխգործելիության ապահովում պետական համակարգում գործող այլ հարթակների հետ | 1. Տեխնիկական առաջադրանքի առկայություն<br>2. Ընդերքօգտագործման ոլորտում մեկ ներքին միասնական հարթակի համակարգի առկայություն | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 1. 2026 թվականի հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ<br>2.2027 թվականի մայիսի 2-րդ տասնօրյակ |
| Թիրախային ուղղություն 1.2. Շտեմարանի՝ պետության կողմից երկրաբանական և որոնողահետախուզական բնույթի տեղեկատվությամբ հագեցման սկզբունքների (այդ թվում՝ հետազոտական աշխատանքների շրջանակի որոշման կարգի և դրանց իրականացման ձևաչափի) սահմանում: | | | | | |
| 1. | Երկրաբանական ծառայության ստեղծում | Նորմատիվ իրավական ակտերի մշակում, որոնցով կսահմանվեն և կկարգավորվեն Երկրաբանական ծառայության ստեղծման, կազմակերպաիրավական տեսակի, գործունեության ծավալման հետ կապված իրավահարաբերությունները | Երկրաբանական ծառայության առկայություն, որը որպես մեկ միասնական մարմին կապահովի Հայաստանի Հանրապետությունում երկրաբանության և ընդերքի ոլորտի կառավարման գործառույթները: | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 2027 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| 2. | Հայաստանի Հանրապետության տարածքի խոշորամասշտաբ ռեգիոնալ երկրաբանական ուսումնասիրում և թվային քարտեզների կազմում: | ՀՀ տարածքի՝ 1:50000 մասշտաբի ռեգիոնալ երկրաբանական քարտեզների կազմման աշխատանքների իրականացում | Առնվազն 5 թեմատիկ երկրաբանական թվային քարտեզների առկայություն՝ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալին ինտեգրելու հնարավորությամբ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (Երկրաբանական ծառայություն), Կադաստրի կոմիտե | 2028 թվականից 2035 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ |
| Թիրախային ուղղություն 1.3. Շտեմարանում հավաքագրվող տեղեկատվության և շտեմարանի կառավարման միջազգային ստանդարտներին համապատասխանության ապահովում | | | | | |
| 1. | CRIRSCO միջազգային կառույցին անդամակցություն | 1. Բանակցությունների վարում «CRIRSCO» միջազգային կառույցին անդամակցելու նպատակով<br>2. Օգտակար հանածոների պաշարների գնահատման Հայաստանում կիրառվող համակարգի ներդաշնակեցում՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների և բորսաների կողմից ընդունելի հաշվետվողականության համակարգերին | Օգտակար հանածոների պաշարների մասով հաշվետվողականության պահանջների կանոնակարգի փոփոխություններ և ֆինանսական կազմակերպությունների և բորսաների կողմից ընդունելի հաշվետվողականության համակարգերի առկայություն | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 2024 թվականի 1-ին եռամսյակից կսկվեն բանակցությունները CRIRSCO միջազգային ստանդարտների կառույցի հետ, աշխատանքների ավարտը կորոշվի բանակցությունների արդյունքում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2. | Ոլորտային լաբորատորիայի («Անալիտիկ» ՓԲԸ) կարողությունների զարգացում և միջազգային չափանիշներին համապատասխանեցում (սերտեֆիկացում), վերջինիս հիմքի վրա ոլորտային ռեֆերենս լաբորատորիայի ստեղծում | 1. Գործող լաբորատորիայի վերազինման, կարողությունների հզորացման, լաբորատոր սարքավորումների և տեխնիկական հնարավորությունների արդիականացման նպատակով ուսումնասիրության իրականացում և տեխնիկատնտեսական հիմնավորման (ներառյալ՝ նախագծա-նախահաշվային) փաստաթղթերի կազմում:<br>2. Լաբորատորիայի վերազինում, հնարավորությունների արդիականացում և սերտիֆիկացում: | Սերտիֆիկացված, միջազգային չափանիշներին համապատասխան լաբորատորիայի առկայություն՝ օգտակար հանածոյի, ինչպես նաև արտադրվող արտադրանքի (խտանյութ, համաձուլվածք և այլն) որակի և քանակի որոշման համար հիմք հանդիսացող նմուշների տվյալների արժանահավատության ապահովում | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 1. 2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ<br>2. մինչև 2030 թվականը |
| **Ռազմավարական նպատակ 2. Ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում  արդյունավետ որոշումների կայացում** | | | | | |
| Թիրախային ուղղություն 2.1. Ընդերքի օգտագործման և պահպանության, հանքանյութերի արտադրության և վերջնական արտադրանքի ստացման ոլորտներում պետության կողմից արդյունավետ որոշումների կայացման սկզբունքների մշակում | | | | | |
| 1. | Հանքարդյունաբերության ոլորտում պետություն-մասնավոր գործընկերության (այսուհետ՝ նաև ՊՄԳ) կիրառման արդյունավետության վերլուծության իրականացում և հաշվետվության ներկայացում | Հանքարդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների ներկայացուցիչների հետ պարբերաբար հանդիպումների կազմակերպում (տարեկան 1 անգամ հաճախականությամբ), ձեռնարկությունների խնդիրների և ռիսկերի վերհանում, ձեռնարկությունների կողմից արդյունավետության բարձրացման և օրենսդրական բարելավումների առաջարկությունների քննարկում | Հանքարդյունաբերության ոլորտում ՊՄԳ-ի իրականացման արդյունավետության, հանրային և մասնավոր գործընկերների միջև բաշխվող ռիսկերի արդյունավետ կառավարման, հանքարդյունահանող ընկերությունների եկամուտների (շահույթի) արդարացի բաշխման և ՊՄԳ ձևաչափով համագործակցության ընդլայնման հեռնկարայնության վերաբերյալ իրականացված հիմնավոր վերլուծություն | Էկոնոմիկայի նախարարություն | 2026 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| 2. | Կազմակերպել մասնագիտական քննարկումներ արտադրական հզորությունների ստեղծման հնարավորության գնահատման նպատակով հետևյալ ուղղություններով՝ | | | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Շրջակա միջավայրի նախարարություն,<br><br>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն,<br><br>Էկոնոմիկայի նախարարություն | 2025 թվականի հուլիսի 1-ին տասնօրյակ |
| 2.1 | կաթոդային պղնձի ստացում՝ հիդրոմետալուրգիական տարբերակին տալով խիստ առաջնահերթություն | Խտանյութի վերամշակման պիրո- և հիդրո-մետալուրգիական մի քանի տեխնոլոգիական լուծումների մանրամասն վերլուծություն և համեմատություն,<br>խոշոր ընկերությունների հետ բանակցությունների հիմքի նախապատրաստում,<br>մասնավորապես 2-3 համագործակցության հուշագրերի ստորագրում,<br>ներդրողների տնտեսական աջակցության փաթեթների և հստակ առաջարկների ձևավորում | ՀՀ աշխարհագրական, բնապահպանական և ենթակառուցվածքային առանձնատակություններից բխող և դրանց համապատասխանող լավագույն տեխնոլոգիական լուծումների ընտրություն | | |
| 2.2 | ստացված կաթոդային պղնձից առանց դրա արտահանման հենց ՀՀ-ում կիսավարտ կամ ավարտուն էլեկտրատեխնիկական արտադրանքի ստացում (շարժիչներ, մալուխներ, խողովակներ, փոշեմետալուրգիա) | Մի շարք ընկերությունների ստեղծման հնարավորություն, գիտատար և ինժեներական ներուժի պահանջարկի ստեղծում:<br>Մոտակա 5-8 տարիների ընթացքում անգլերենի իմացությամբ և ժամանակակից ինժեներատեխնիկական (մասնավորապես՝ էլեկտրատեխնիկա) կրթությամբ առնվազն 20 մասնագետի պատրաստում | Կիսավարտ կամ ավարտուն էլեկտրատեխնիկական արտադրանքի ստացում | | 2028 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 2.3 | չժանգոտող պողպատից բարձրորակ համաձուլվածքների | Կադրային պոտենցիալի ստեղծում, ազգային մակարդակում | չժանգոտող պողպատից բարձրորակ | Բարձր տեխնոլոգիական | 2028 թվականի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ստացում | մասնագիտական կարողությունների պահանջի բավարարում, մարդկային ռեսուրսների զարգացում: Մոտակա 5-8 տարիների ընթացքում անգլերենի իմացությամբ և ժամանակակից ինժեներա-տեխնիկական կրթությամբ (մասնավորապես՝ նյութագիտություն) առնվազն 20 մասնագետի պատրաստում | համաձուլվածքների ստացում | արդյունաբերության նախարարություն | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| Թիրախային ուղղություն 2.2. Ֆինանսական, սոցիալ-տնտեսական և շրջակա միջավայրի պահպանության հավասարակշռության ապահովում | | | | | |
| 1. Պետական եկամուտների ապահովում՝ պատշաճ և հավասարակշռված ֆիսկալ համակարգի միջոցով | | | | | |
| Խնդիր՝ Հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի և այլ արտադրության սահմանում | | | | | |
| 1.1 | Ներդնել խտանյութերի, ձուլվածքի և այլ արտադրության սահմանումների որոշման մեթոդաբանություն (տեխնիկական ստանդարտ) | Իրավական ակտերի մշակում, որոնցով միջազգայնորեն ընդունված սահմանումներին համահունչ կամրագրվի խտանյութերի, ձուլվածքի և այլ արտադրության սահմանումների որոշման մեթոդաբանությունը | Հարկային բազայի ավելի թափանցիկ և հիմնավորված հաշվարկման հնարավորություն | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Էկոնոմիկայի նախարարություն | 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 1.2 | Դասակարգել ՀՀ–ում արտադրվող և արտահանվող մետաղական հանքանյութերի փաստացի տեսակները, իրականացնել գործողություններ արդեն իսկ ի հայտ եկած բացթողումների կամ անհամապատասխանությունների շտկման հարցում, վերացնել հետագա բացերը, որոնք կարող են նպաստել հարկային պարտավորություններից խուսափելուն | Իրավական ակտերի մշակում, համաձայն որոնցով կդասակարգվեն ՀՀ–ում արտադրվող և արտահանվող մետաղական հանքանյութերի փաստացի տեսակները, կբարելավվի գործող իրավական դաշտը | Սահմանումների օրենսդրական ամրագրում և որոշակիության մակարդակի բարձրացում | | 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 1.3 | Սահմանել հանքանյութերի պատկանելիությունը այս կամ այն մետաղին՝ ոչ թե ելնելով արտահանվող նյութերի արժեքներից, այլ տվյալ արտադրանքին ներկայացվող տեխնիկական պայմաններից | Ըստ դասակարգման ու օրենսդրական պահանջների մշակել տեխնիկական պահանջների (ՏՊ) փաստաթղթեր, անհրաժեշտության դեպքում կատարել օրենսդրական դաշտին համապատասխան փոփոխություններ, որոնք կհամապատասխանեն ՀՀ-ում արտադրվող և արդյունահանվող հանքանյութերին և թույլ կտան հստակ սահմանումներ տալ և հստակեցնել այս կամ այն մետաղին հանքանյութերի պատկանելությունը: | ՏՊ փաստաթղթերի առկայություն | | 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| Խնդիր՝ Խտանյութում և այլ արտադրանքում վերջնական պարունակության ճշգրիտ որոշման խնդիր | | | | | |
| 1.1 | Նմուշարկման գործընթացի խստացման նպատակով նախատեսել պետական վերահսկողության գործիքակազմ | Իրավական ակտերի մշակում պետական վերահսկողական գործիքակազմի խստացման նպատակով՝ պետական վերահսկողության սահմանում նմուշարկման գործընթացի շրջանակներում, ինչպես նմուշարկման տեխնիկական միջոցների ստուգման, այնպես էլ ընթացիկ պարբերական ստուգումների տեսքով:<br><br>Վերջինիս համատեքստում տեսչական մարմնի լիազորությունների շրջանակի վերանայում: | Պարբերական նմուշարկման, մշտական հսկողական մեխանիզմի ապահովում | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Պետական եկամուտների կոմիտե | 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1.2 | Մասնավոր և պետական սեկտորների կայուն համագործակցություն | Իրավական դաշտի կարգավորում՝ հավատարմագրված կազմակերպությունների դերի բարձրացման նպատակով: | Արժանահավատության բարձրացում և վստահության մթնոլորտի ձևավորում | | 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 1.3 | Ներդնել մասնավոր սեկտորի հնարավորությունների հզորացման ծրագիր | Իրավական դաշտի կարգավորում՝ օրենսդրական մակարդակով հավատարմագրված կազմակերպությունների դերի բարձրացում | Պետություն-մասնավոր սեկտոր կայուն փոխհարաբերությունների հաստատում | | 2026 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 1.4 | Վերազինել պետական լաբորատորիան և ամրագրել լիազորություններ | 1. Գործող լաբորատորիայի վերազինման, կարողությունների հզորացման, լաբորատոր սարքավորումների և տեխնիկական հնարավորությունների արդիականացման նպատակով ուսումնասիրության իրականացում և տեխնիկատնտեսական հիմնավորման (ներառյալ՝ նախագծա-նախահաշվային փաստաթղթերը) կազմում:<br>2. Լաբորատորիայի վերազինում, կարողությունների հզորացում և սերտիֆիկացում:<br>3 Հանքարդյունաբերության ոլորտում ռեֆերենս լաբորատորիայի լիազորությունների մրագրում | Միջազգային չափանիշներին համապատասխանող լաբորատորիայի առկայություն | | 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 1.5 | Հստակ սահմանել ճշգրտության և թափանցիկության պահանջները | Հաշվետվությունների պարբերական ներկայացման և պարբերական նմուշարկում անցկացնելու ընթացակարգերի սահմանում | Առավել արժանահավատ արդյունքների առկայություն, թափանցիկության բարձրացում և վստահության մթնոլորտի ձևավորում | | 2026 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 2. Սոցիալ-տնտեսական հավասարակշռության ապահովում | | | | | |
| 2.1. Համայնքների նկատմամբ հանքարդյունաբերության ոլորտի պատասխանատու մոտեցման ապահովում | | | | | |
| Խնդիր՝ Համայնքների նկատմամբ օրենսդրությամբ սահմանված սոցիալական պարտավորությունների ընդհանուր պահանջի հստակեցում՝ սահմանելով նվազագույն աջակցության չափ/ձև և ուղղություններ՝ ՏԻՄ-երին մասնակից դարձնելով պարտավորությունների որոշման և սահմանման գործընթացում | | | | | |
| 2.1.1 | Սահմանել սոցիալական ելակետային տվյալների հավաքագրման և վերլուծության պայման՝ որպես ՇՄԱԳ գործընթացի մաս | Մշակել ուղեցույց՝ ՇՄԱԳ գործընթացում շրջակա միջավայրի բաղադրիչների (հող, օդ, ջուր, կենսաբազմազանություն և այլն) ելակետային տվյալների հավաքման և վերլուծման համար | Մթնոլորտային օդի, ջրի, հողի, անտառային ծածկույթի, կենսաբազմազանության և համայնքային առողջության վերաբերյալ ելակետային տեղեկատվության առկայություն | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br>Շրջակա միջավայրի նախարարություն | 2029 թվականի մարտի 1-ին տասնօրյակ |
| 2.1.2 | Սահմանել շահագրգիռ կողմերի ներգրավման պլանները Կառավարություն ներկայացնելու պահանջ՝ որպես ՇՄԱԳ մաս և ի լրումն, Կառավարության մոնիտորինգը ապահովելու համար, առ այն որ ընկերությունը հետևում է իր ներգրավվածության ծրագրին | Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի (ՇԿՆՊ) մշակման և որպես ՇՄԱԳ-ի մաս ներկայացնելու պահանջի սահմանման նպատակով օրենսդրական փոփոխությունների իրականացում, մասնավորապես՝ ՇՄԱԳ-ում համայնքների ընդգրկման վերաբերյալ ուղեցույցների սահմանում | ՇՄԱԳ գործընթացում համայնքների ընդգրկման հստակ ընթացակարգ, վստահության մթնոլորտի ձևավորում | | 2028 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 2.1.3 | Սահմանել ընդերքօգտագործողների կողմից սոցիալական մեղմացման նպատակով համայնքներին կատարվող հատկացումների միանման և արդարացի բաշխման մեխանիզմ | Մշակել օրենսդրական նախաձեռնության փաթեթ, որով կսահմանվի Օրենսգրքով սահմանված սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի հստակեցում և օգտակար | Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստում | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, | 2024 թվականի հուլիսի 1-ին տասնօրյակ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2.1.4 | Հրապարակել Կառավարությանը և համայնքներին կատարվող սոցիալական աջակցության տարեկան ծախսերը և դրանց բաշխումը: | հանածոյի տեսակից կախված՝ համանման մոտեցումների կիրառում:<br>Հաշվետվողականության և հրապարակայնության սահմանում: | | Տեղական ինքնակառավարման մարմիններ | |
| 2.1.5 | Ձեռնարկել համայնքի կարողությունների զարգացման ծրագրեր | Կատարված օրենսդրական փոփոխությունների իրազեկման և կարողությունների զարգացման նպատակով միջոցառումների իրականացում | Համայնքների կարողությունների զարգացում | | 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ, այնուհետև՝ ընթացիկ |
| 2.1.6 | Համայնք-ընդերքօգտագործող կազմակերպություն համագործակցության շրջանակների և հստակ պարտավորությունների սահմանումը սոցիալ-տնտեսական նախաձեռնությունների, համայնքային ընդհանուր զարգացման, կրթության և գիտության, փոքր բիզնեսի զարգացման ենթատեքստում | Համայնք-ընդերքօգտագործող կազմակերպություն համագործակցության շրջանակների և հստակ պարտավորությունների սահմանման նպատակով օրենսդրական փոփոխությունների իրականացում | Վստահության մթնոլորտի բարձրացում | | 2026 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| 2.2. Աշխատողների առողջության պահպանության և անվտանգության ապահովում | | | | | |
| Խնդիր՝ Հանքավայրերում աշխատողների և շրջակա համայնքների համար անվտանգության նվազագույն չափանիշների առկայության անհրաժեշտություն (ցանկապատում, արտակարգ իրավիճակների պլանի առկայություն, ազդանշանային համակարգեր, բեռնատար մեքենաների կահավորանք, աշխատողների համար անվտանգության անձնական պարագաներ/հագուստ, ներքին անվտանգության կանոնակարգեր և այլն) | | | | | |
| 2.2.1 | Վերանայել ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում աշխատանքի անվտանգության և առողջության պահպանության (ԱԱ և ԱՊ) առնչվող օրենսդրությունը միջազգային լավագույն փորձի և ստանդարտների համատեքստում, մասնավորապես վավերացնել Աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO) «Աշխատանքի անվտանգության և առողջության մասին» ԱՄԿ 155-իդ կոնվենցիան: | Եռակողմ սոցիալական գործընկերության մակարդակում ԱՄԿ ստանդարտների, այդ թվում ԱՄԿ 155-րդ կոնվենցիայի վավերացման գործընթացի աշխատանքային քննարկում<br><br>Մասնակցություն ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում աշխատանքի անվտանգության և առողջության պահպանության առնչվող օրենսդրության կատարելագործման գործընթացին | Աշխատանքի անվտանգության և առողջության պահպանության օրենսդրությունը հնարավորություն կտա բարելավել ընդերքօգտագործող ընկերությունների աշխատակիցների անվտանգությունը, որն էլ անհրաժեշտ գործոն կհանդիսանա մասնագիտական հիվանդությունների և դժբախտ դեպքերի կանխարգելման և հետագայում նվազման առումով | Առողջապահության նախարարություն,<br><br>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին,<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Ներքին գործերի նախարարություն,<br><br>Շրջակա միջավայրի նախարարություն,<br><br>Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 2.2.2 | Մշակել, ներդնել, մշտադիտարկել և պարբերաբար վերանայել համայնքային աղետների ռիսկերի կառավարման պլաններ, կառավարման ռազմավարության իրականացման վերահսկողական համակարգ | Իրավական ակտերի մշակում՝ համայնքային աղետների ռիսկերի կառավարման պլանների մշակման, իրագործման, մոնիթորինգի, պարբերական վերանայման, ինչպես նաև վերահսկողական համակարգի ներդրման նպատակով, | հարակից համայնքների բնակչության առողջության ու անվտանգության պատշաճ կառավարման հնարավորություն, | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Ներքին գործերի | 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Բնակչության իրազեկման առումով կանոնավոր դասընթացների իրականացում | արտակարգ իրավիճակներին արձագանքելու պատրաստ համայնքային բնակչություն | նախարարություն,<br><br>Առողջապահության նախարարություն,<br><br>Շրջակա միջավայրի նախարարություն | |
| 2.2.3 | Ընդերքօգտագործողների համար սահմանել իրավական պահանջ՝ իրականացնելու տեխնիկական անվտանգության և համայնքային առողջության ռիսկերի գնահատում և մշակել պարբերական հաշվետվողականության համակարգ | Տեխնիկական անվտանգության իրականացման և համայնքային առողջության ռիսկերի գնահատման և պարբերական հաշվետվողականության համակարգի ներդրման նպատակով գործող իրավակարգավորումներում փոփոխությունների իրականացում | Հաշվետվողականության և թափանցիկության բարձրացում,<br><br>հանքարդյունաբերության ոլորտում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման գործընթացների բարելավում | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Շրջակա միջավայրի նախարարություն,<br><br>Ներքին գործերի նախարարություն | 2026 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ- |
| 2.2.4 | Վերանայել գործող բուժ.զննության կարգերը՝ միջազգային լավագույն փորձի ներքո: Մասնավորապես կարելի է դիտարկել. Minimum standards of fitness to work at a mine ուղեցույցը | ՀՀ Կառավարության 2004 թվականի հուլիսի 15-ի «Արտադրական միջավայրում և աշխատանքային գործընթացի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող բնակչության առանձին խմբերի առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության անցկացման կարգը, գործոնների, կատարվող աշխատանքների բնույթի, զննության ծավալի, բժշկական հակացուցումների ցանկերը և աշխատանքի պայմանների հիգիենիկ բնութագրման կարգը հաստատելու մասին» N 1089-Ն որոշման լրամշակում | Հանքարդյունաբերության բնագավառում աշխատողների առողջության պահպանության բարձրացում և մասնագիտական հիվանդությունների զարգացման կանխարգելում | Առողջապահության նախա-րարություն (բուժ.զննության կարգի վերանայում)<br><br>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին (մասնագիտությունների ցանկի կազմում՝ սահմանելով՝ տվյալ մասնագիտությամբ աշխատողի վտանգավոր գործոնների և նյութերի շփման շրջանակը) | 2025 թվականի հուլիսի 1-ին տասնօրյակ |
| 2.2.5 | Մեծացնել արտադրական վտանգավոր օբյեկտներ փորձաքննող պետական լիազոր մարմինների հզորությունները, փորձաքննություններն իրականացնել ոչ միայն փաստաթղթային, այլև՝ տեխնիկապես | Արտադրական վտանգավոր օբյեկտների շահագործական խափանումների և ոչ պատշաճ կառուցման հետևանքով արտադրական վթարների և դժբախտ պատահարների հաճախականության և ծանրության աստիճանի նվազում 60% 80% անխափան արտադրական գործընթացի իրականացում | Տեխնիկական անվտանգության մակարդակի բարձրացում | Ներքին գործերի նախարարություն | 2025 թվականի դեկտեմբերի 1-ի |
| Խնդիր՝ Հանքարդյունաբերության օբյեկտների նախագծման, կառուցման, պահպանման և փակման պահանջների ու չափանիշների սահմանում, ինչպես նաև կարողությունների էական սահմանափակումների և մարտահրավերների գնահատում հանքարդյունաբերական ենթակառուցվածքների տեխնիկական անվտանգության համատեքստում | | | | | |
| 2.2.6 | Ներդնել տեխնիկական անվտանգության պայմանների պահպանման արդյունավետ գործիքակազմ՝ իրավական դաշտի բարելավմամբ | Պետական խոշոր մարմինների հզորացման նպատակով հանքավայրերի նախագծերը փորձաքննության ենթարկել միայն պետական լիազոր մարմնի կողմից, ինչպես նաև մետաղական բոլոր հանքավայրերի փորձաքննությունը նույնպես իրականացնել պետական լիազոր մարմնի կողմից | Տեխնիկական անվտանգության մակարդակի բարձրացում | Ներքին գործերի նախարարություն,<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների | 2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2.2.7 | Նոր ենթաօրենսդրական ակտեր մշակելիս հաշվի առնել միջազգային ստանդարտները, ինչպես նաև շահագրգիռ կողմերի ներկայացրած առաջարկները և օրենսդրական ակտերի մշակման փուլում ներառել լիազոր մարմին-ընդերքօգտագործող-համայնք կապի ձևավորումը և համատեղ քննարկումների իրականացումը, ինչպես նաև դրանց համապատասխան նոր ստուգաթերթերի մշակումը | Ուսումնասիրել միջազգային փորձը և անհրաժեշտության դեպքում կատարել փոփոխություններ առկա ենթաօրենսդրական ակտերում | Համապատասխանությունը միջազգային պահնջներին | նախարարություն,<br><br>Առողջապահության նախարարություն,<br><br>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,<br><br>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին<br>Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | 2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| 2.2.8 | Նախատեսել տվյալների կենտրոնացված և ըստ ազդակիր համայնքների պարբերական հավաքագրման ու վերլուծության պահանջ, ինչպես նաև բնակչության առողջության պարբերական ստուգումների վերաբերյալ պահանջ | Ներկայումս առկա է արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստր, որտեղ իրականացվում է օբյեկտների հաշվառում և վերլուծություն | Ընդհանրական բազայի ստեղծում | | 2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| 2.2.9 | Սահմանել տեխնիկական անվտանգության համապատասխան ստանդարտների միասնական ուղեցույց, որն ամփոփ կերպով կներկայացնի տեխնիկական անվտանգության հիմնական պահանջները և կկցվի աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերին | Ուսումնամեթոդական ծրագրերի մշակում և մասնագիտական հրահանգների կազմում | Կարողությունների զարգացում | | 2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| 2.2.10 | Սահմանել աշխատողների հետ պարբերական վերապատրաստումների կազմակերպման օրենսդրական պահանջ և իրազեկել հասարակությանը և աշխատուժին այն բնապահպանական հետևանքների մասին, որոնք կարող են առաջանալ արտադրական վթարների հետևանքով | Համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի գ) կետի կատարվում է ոլորտի մասնագետների, փորձագետների, տնտեսության մեջ աշխատող ինժեներատեխնիկական և մասնագետ կադրերի ուսուցում և որակավորման գծով աշխատանքների կազմակերպում | Ոլորտային մասնագետների առկայության ապահովում | | 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ<br>Առնվազն տարին մեկ անգամ |
| Խնդիր՝ Հանքարդյունաբերության ոլորտում աշխատանքային իրավունքներին առնչվող գնահատման, մոնիթորինգի և կիրառման մեխանիզմների վերանայման, առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների, հանգստի իրավունքի ապահովման վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացման անհրաժեշտություն | | | | | |
| 2.2.11 | Պարբերաբար կազմակերպել ոլորտային իրազեկումներ համայնքային բնակչության և աշխատողների հետ: Վերոշարադրյալ խնդիրների լուծման համար անհրաժեշտ է ձևավորել ոլորտային մասնագետների և փորձագետների խումբ՝ օգտակար հանածոների պաշարների գնահատման Հայաստանում կիրառվող համակարգի ներդաշնակեցում՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների և բորսաների կողմից ընդունելի հաշվետվողականության համակարգի ներդրմամբ | Աշխատանքային խմբի ստեղծում օգտակար հանածոների պաշարների գնահատման Հայաստանում կիրառվող համակարգի՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների և բորսաների կողմից ընդունելի հաշվետվողականության համակարգի հետ ներդաշնակեցման նպատակով | Տարբեր շահառուների ներգրավվածությամբ մասնակցային գործընթացի բարելավում | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Շրջակա միջավայրի նախարարություն,<br><br>Առողջապահության նախարարություն,<br><br>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,<br><br>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին | 2025 թվականի մայիսի 1-ին տասնօրյակ |
| 2.2.12 | Պետական մակարդակով կազմակերպել և իրականացնել աշխատողների պարբերական վերապատրաստումներ՝ աղետալի իրավիճակներում գործելու պայմանների վերաբերյալ, կազմակերպել պարբերական հանդիպումներ կարիքների գնահատման համար | Հանդիպում-միջոցառումների կազմակերպում, կարիքների գնահատում,վերապատրաստումների իրականացում | Կարողությունների զարգացում | | 2025 թվականի մայիսի 1-ին տասնօրյակ<br>Առնվազն տարին մեկ անգամ |
| 2.2.13 | Ապահովել իրավական մեխանիզմներ՝ աշխատողների | Նշյալ գործընթացի ապահովման նպատակով իրավական | Աշխատանքային իրավունքների | | 2026 թվականի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | իրավունքների պահպանման և բարձրաձայնման գործընթացը երաշխավորելու համար: | մեխանիզմների մշակում | խախտումների նվազեցում 90%- ով | Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 2.2.14 | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքում սահմանել փորձաքննական եզրակացության մեջ առողջապահական, աշխատողների առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման, օբյեկտների տեխնիկական անվտանգության, կլիմայի փոփոխության հնարավոր ազդեցության, ազդակիր բնակչության նկատմամբ հաշվետվողականության պահանջների ներառում | Հաշվետվողականության պահանջների սահմանման նպատակով իրավական ակտի մշակում | Հաշվետվողականության և թափանցիկության բարձրացում | | 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 2.2.15 | Ապահովել արհեստակցական ընկերությունների կայուն դերակատարությունը գործընթացին, Համագործակցության հուշագրի կնքում | Համագործակցության հուշագրի մշակում և կնքում | Մասնակցային գործընթացի ապահովում | | 2025 թվականի փետրվարի 1-ին տասնօրյակ |
| 2.2.16 | Ապահովել ընդերքօգտագործողների և համայնքների մասնակցությունը ենթաօրենսդրական ակտերի մշակմանը, սահմանել վտանգների և ռիսկերի գնահատման միասնական մեթոդաբանություն | Վտանգների և ռիսկերի գնահատման միասնական մեթոդաբանության մշակում՝ ընդերքօգտագործողների և համայնքների մասնակցությամբ | Մասնակցային գործընթացի ապահովում | | 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 2.3. Խոցելի խմբերի ներգրավում | | | | | |
| Խնդիր՝ Խոցելի խմբերի ներգրավվածության ապահովումը հանքարդյունաբերության համատեքստում | | | | | |
| 2.3.1 | Ապահովել խոցելի խմբերի հանդեպ ընկերությունների կողմից քաղաքականության մշակում՝ ծրագրի նախագծման փուլում | Խոցելի խմբերի ներգրավման նպատակով իրավակարգավորումների մշակում | Խոցելի խմբերի ներգրավման բարելավված ցուցանիշներ, ԲՍԿ կատարողականի բարելավում<br>Հանքարդյունաբերության մեջ կանանց մասնակցության աճը նվազագույնը 40%-ով միջոցառման իրականացումից հինգ տարի անց<br>Միջոցառման իրականացումից երկու տարի անց հանքարդյունահանող ընկերությունների 90%-ի կողմից իրականացված գենդերային/խոցելի խմբերի կորպորատիվ քաղաքականություններ: | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,<br><br>Շրջակա միջավայրի նախարարություն,<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, | 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 2.3.2 | Ապահովել հանքարդյունաբերության ողջ ցիկլի ընթացքում խոցելի խմբերի հանդեպ հատուկ քաղաքականության կիրառում | | | | 2025 թվականի հունվարի 2-րդ տասնօրյակ |
| 2.3.3 | Ապահովել խոցելի խմբերի և բոլոր շահագրգիռ կողմերի հետադարձ կապի հնարավորություն | | | | 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 2.3.4 | Ապահովել խոցելի խմբերի, այդ թվում՝ կանանց ներգրավման դինամիկ աճ | | | | 2027 թվականի հունվարի 2-րդ տասնօրյակ |
| 3. Շրջակա միջավայրի պահպանություն | | | | | |
| 3.1 Շրջակա միջավայրի պահպանություն և կառավարում | | | | | |
| Խնդիր՝ Հայաստանում շրջակա միջավայրի պահպանության նպատակով հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարության և իրավական, նորմատիվային ու ինստիտուցիոնալ շրջանակի գնահատում | | | | | |
| 3.1.1 | Մեծացնել գործող կարգավորումների և պահանջների | • Ստորգետնյա և վերգետնյա միջավայրում աշխատող | Ընդերքօգտագործման վերահսկողության | ՀՀ բնապահպանության և | 2024 թվականի հուլիսի 1- |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | նկատմամբ հսկողությունը և ավելացնել դրա հետ կապված վերահսկող մարմինների կարողությունները, մասնավորապես՝<br>• Վերահսկող մարմինների աշխատակիցների համար կազմակերպել պարբերական վերապատրաստման դասընթացներ<br>• Գնահատել տեխնիկական զինվածության մակարդակը և ապահովել անհրաժեշտ տեխնիկական միջոցներով | Lider համակարգեր<br>• Սարքավորումները աշխատացնող համապատասխան ծրագրեր<br>Ծրագրերի (AutoCad Civil, Pix4D, Agisoft metashape,GIS և Leapfrog) ուսուցում և աշխատողների վերապատրաստում | աշխատանքների բարելավում | ընդերքի տեսչական մարմին<br><br>Շրջակա միջավայրի նախարարություն,<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | ին տասնօրյակ<br><br>Վերապատրաստումները առնվազն տարին մեկ անգամ |
| 3.1.2 | Սահմանել հանքարդյունահանման տարբեր փուլերում բնապահպանական և սոցիալական ռիսկերի գնահատման օրենսդրական պահանջ՝<br>• մշակել և (կամ) տեղայնացնել, ներդաշնակեցնել ռիսկերի գնահատման ուղեցույցներ ՀՀ համար<br>• Սահմանել բարձր ռիսկերի համար կանխարգելման և (կամ) մեղմացման միջոցառումների կազմման և պարբերաբար վերանայման պահանջ | «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (03.05.2023թ. փոփոխությամբ) սահմանված են՝<br>նախագծային փաստաթղթով նախատեսված սոցիալական հնարավոր ազդեցությունները, ռիսկերը, օգուտները, վերլուծական բնութագրերը, մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը, նախագծային փաստաթղթով նախատեսված հնարավոր արտակարգ իրավիճակների հետևանքով առաջացած ռիսկերի գնահատումը, դրանց կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև բնապահպանական կառավարման պլանը, որը նախատեսում է շրջակա միջավայրի վրա հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման համար նախատեսվող միջոցառումները (շինարարության, շահագործման, փակման, հետփակման փուլերը, ռիսկային և արտակարգ իրավիճակները), դրանց ընտրության և արդյունավետության հիմնավորումը, իրականացման ժամանակացույցը, մշտադիտարկման ցուցիչները, ծախսերի գումարային գնահատումը:<br>Ռիսկերի գնահատման կարգին ներկայացվող պահանջները կարող են ներառվել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» կարգում:<br><br>Իրականացնել հանքարդյունահանման ոլորտի ռիսկի գնահատում՝ ուղղված ռիսկի առաջացման հավանականության և օրենքով նախատեսված պահպանվող (արժեք ներկայացնող) միավորի/միավորների վնասի չափի որոշմանը: | Տնտեսական գործունեության տարբեր փուլերում (շինարարության, շահագործման, փակման, հետփակման փուլերը, ռիսկային և արտակարգ իրավիճակները) շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա ազդեցության, սոցիալական ռիսկերի գնահատման օրենսդրական պահանջի և գնահատման կարգի առկայություն:<br><br>Բարձր ռիսկերի մեղմացման և (կամ) կանխարգելման միջոցառումների կազմում | Շրջակա միջավայրի նախարարություն,<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br>Ներքին գործերի նախարարություն | 2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| 3.1.3 | Հստակեցնել ընդերքօգտագործման տարբեր օբյեկտների սանիտարական գոտիները՝ վերագնահատել 1971թ. ՍՆ | ՀՀ քաղաքաշինության նախարարի 2003 թվականի մայիսի 23-ի N 32-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ III-9.02-02-03 | Քաղաքաշինության ոլորտի պետական լիազոր մարմնի հրամանով վերանայված | Շրջակա միջավայրի նախարարություն, | 2024 թվականի դեկտեմբերի 2-րդ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 245-71 նորմով սահմանված սանիտարական գոտիները՝ հաշվի առնելով ՀՀ ֆիզիկա-աշխարհագրական առանձնահատկությունները | «Արդյունաբերական կազմակերպությունների գլխավոր հատակագծեր» շինարարական նորմերի վերանայում, փոփոխությունների ու լրացումների կատարում: | նորմերի առկայություն: | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Առողջապահության նախարարություն<br><br>Քաղաքաշինության կոմիտե | տասնօրյակ |
| 3.1.4 | ՀՀ Կառավարության 29.07.2016թ. նիստի N 29 արձանագրային որոշման հավելված 2-ի Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունքներ հայցելու համար ներկայացվող շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման հաշվետվության կազմման ուղեցույցով սահմանված դրույթներին, ինչպես նաև հիմք ընդունելով միջազգային լավագույն փորձը, տալ պարտադիր կիրառման իրավական ակտի կարգավիճակ՝ հստակեցնելով արձանագրային որոշման մեջ նկարագրված մոտեցումները | Շրջակա միջավայրի նախարարի 2022թ. հոկտեմբերի 25-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները հաստատելու մասին» N369-Ն հրամանում լրացումներ և փոփոխություններ նախատեսող հրամանի նախագծի մշակում: | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման լրամշակված ուղեցույցների առկայություն Հաշվետվության մեջ ներկայացված պարտադիր կատարման պահանջների լիարժեք կատարում/իրականացում: Շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցում | Շրջակա միջավայրի նախարարություն | 2023 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 3.1.5 | Մշակել ընթացակարգ՝ ՇՄԱԳ դրական եզրակացություն և ընդերքօգտագործման թույլտվություն ստանալուց հետո շրջակա միջավայրին առնչվող մնացած այլ թույլտվությունների (ջրօգտագործման և ջրհեռացման, մթնոլորտային օդ արտանետումների) փաթեթային կարգով ստացման համար (մանրամասն տես նաև նպատակ 11-ի 2-րդ միջոցառումը) | ՇՄԱԳ դրական եզրակացություն և ընդերքօգտագործման թույլտվություն ստանալուց հետո շրջակա միջավայրին առնչվող մնացած այլ թույլտվությունների (ջրօգտագործման և ջրհեռացման, մթնոլորտային օդ արտանետումների) փաթեթային կարգով ստացման կարգը սահմանող իրավական ակտի մշակում: | ՇՄԱԳ դրական եզրակացություն և ընդերքօգտագործման թույլտվություն ստանալուց հետո շրջակա միջավայրին առնչվող մնացած այլ թույլտվությունների (ջրօգտագործման և ջրհեռացման, մթնոլորտային օդ արտանետումների) փաթեթային կարգով ստացման մեխանիզմի ներդնում: | Շրջակա միջավայրի նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 3.1.6 | Մշակել մշտադիտարկումների կարգ՝ համաձայն ՄՖԿ ուղեցույցի և Բրիտանական Կոլումբիայի իշխանությունների (Կանադա) կողմից մշակված «Ջրի և օդի ելակետային մշտադիտարկման ուղեցույց հանքարդյունաբերության համար» ուղեցույց փաստաթղթի պահանջների | Միջազգային լավագույն փորձին համապատասխան մշտադիտարկման կարգը սահմանող ուղեցույցի մշակում: | Մոնիտորինգի տվյալների ստանդարտացման և դրանց՝ տարբեր երկրների միջև համեմատելիության աստիճանի բաձրացում, մոնիտորինգի արդյունքների ինտեգրման հնարավորություն: | Շրջակա միջավայրի նախարարություն | 2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| Խնդիր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գործընթացի, հանրային քննարկումների ընթացակարգերի բարելավման անհրաժեշտություն | | | | | |
| 1 | Մշակել հանքարդյունաբերությունից ստացված օգուտների և վնասների հարաբերակցության՝ ծախս-օգուտ հաշվարկի վերլուծության մեթոդաբանություն՝ վնասի գնահատման միասնական մեթոդաբանության համատեքստում | Հանքարդյունաբերությունից ստացված օգուտների և վնասների հարաբերակցության՝ ծախս-օգուտ հաշվարկի վերլուծության մեթոդաբանության մշակում | Հանքարդյունաբերությունից ստացված օգուտների և վնասների հարաբերակցության առկայություն,<br><br>Հանքարդյունաբերության ոլորտում բարելավված և գործուն, միջազգային լավագույն փորձին համահունչ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Շրջակա միջավայրի նախարարություն, | 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կարգավորումներ | Էկոնոմիկայի նախարարություն | |
| 2 | Մշակել կենսաբազմազանության վրա ազդեցության գնահատման մեթոդաբանություն/ուղեցույց | Շրջակա միջավայրի նախարարի 2022թ. հոկտեմբերի 25-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները հաստատելու մասին» N369-Ն հրամանում լրացումներ և փոփոխություններ նախատեսող հրամանի նախագծի հավելված հանդիսացող կենսաբազմազանության վրա ազդեցության գնահատման մեթոդաբանության/ ուղեցույցի մշակում: | Շրջակա միջավայրի (ներառյալ՝ կենսաբազմազանության) վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման լրամշակված ուղեցույցների առկայություն:<br>Կենսաբազմազանության վրա ազդեցության գնահատման մեթոդաբանութան/ուղեցույցի մշակումը կանդրադառնա էկոհամակարգում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ տվյալների հավաքագրմանը, այդ փոփոխությունների կանխման ուղղությամբ հնարավոր միջոցառումների իրականացմանը, կենսաբազմազանության մշտադիտարկմանն ու գնահատմանը և կարող է գործնական, կիրառական խորհրդատվության աղբյուր լինել պլանավորող լիազոր մարմինների և իրավաբանների համար:<br>ՇՄԱԳ գործընթացում կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցության իրական գնահատման որակի և արդյունավետության բարձրացում 70%-ով | Շրջակա միջավայրի նախարարություն՝ կենսաբազմազանության ոլորտի ակադեմիական ինստիտուտների խորհրդատվությամբ | 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 3 | Մշակել ՇՄԱԳ գործընթացում համայնքների ընդգրկման վերաբերյալ ուղեցույց | «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (03.05.2023թ. փոփոխությամբ) նախատեսված՝ հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակության, հանրային լսումների ընթացակարգի, ՇՄԱԳ-ի և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները սահմանող ուղեցույցի մշակում | Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակության, հանրային լսումների ընթացակարգի, ՇՄԱԳ-ի և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները սահմանող իրավական ակտի առկայությամբ պայմանավորված՝ հանրության իրական ներգրավման ավելացում:<br>Համայնքների իրական | Շրջակա միջավայրի նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ներգրավվածության 90% ապահովում, ինչը հետագայում նաև հնարավորություն կտա այդ համայնքներին օգտվել հանքարդյունահանման արդյունքում համայնքների զարգացման և սոցիալական ծրագրերից | | |
| 4 | ՇՄԱԳ գործընթացում ներառել էկոհամակարգային ծառայությունները՝ մշակելով էկոհամակարգային ծառայությունների գնահատման ուղեցույց | «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (03.05.2023թ. փոփոխությամբ) նախատեսված՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» կարգը սահմանող իրավական ակտի նախագծում էկոհամակարգային ծառայությունների և դրանց գնահատման վերաբերյալ դրույթներ նախատեսող ուղեցույցի մշակում | ՇՄԱԳ գործընթացում էկոհամակարգային ծառայությունների ու դրանց գնահատման վերաբերյալ ուղեցույցի առկայություն: Ազդակիր համայնքներում ընդերքօգտագործման այլընտրանք հանդիսացող գործունեությունների 80% համապարփակ գնահատման հնարավորություն, ներկայիս 0% փոխարեն | Շրջակա միջավայրի նախարարություն | 2025 թվականի հուլիսի 1-ին տասնօրյակ |
| 5 | Մշակել ուղեցույց ՇՄԱԳ գործընթացում շրջակա միջավայրի բաղադրիչների (հող, օդ, ջուր, կենսաբազմազանություն և այլն) ելակետային տվյալների հավաքման և վերլուծման համար | «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (03.05.2023թ. փոփոխությամբ) նախատեսված՝ ՇՄԱԳ հաշվետվությունների բովանդակություններում նախատեսված՝ շրջակա միջավայրի վերաբերյալ օգտագործված ելակետային տվյալների հավաքման և վերլուծության վերաբերյալ ուղեցույցի մշակում: | ՇՄԱԳ հաշվետվություններում ներառվող՝ շրջակա միջավայրի վերաբերյալ ելակետային տվյալների հավաստիության մեծացում:<br><br>Շրջակա միջավայրի ելակետային տվյալների 70- 80% համապարփակ հավաքում և վերլուծության իրականացում՝ 80%-ով նվազեցնելով ընդերքօգտագործող ընկերությունների հայեցողությամբ իրականացվող գործընթացները ՇՄԱԳ հաշվետվություններում ելակետային տվյալների ճշգրիտ ներկայացում | Շրջակա միջավայրի նախարարություն | 2024 թվականի սեպտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 6 | Սահմանել ուղեցույց նախագծային այն փոփոխությունների համար, որոնք ենթակա են ՇՄԱԳ գործընթացի | «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (03.05.2023թ. փոփոխությամբ) նախատեսված՝ նախատեսվող գործունեության տեսակների վերակառուցման կամ ընդլայնման կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինման կամ վերապրոֆիլավորման կամ կոնսերվացման կամ տեղափոխման կամ դադարեցման կամ փակման կամ քանդման կամ նախագծային փոփոխության ՇՄԱԳ-ի և փորձաքննության անհրաժեշտությունը որոշելու ուղեցույցի մշակում | ՇՄԱԳ գործընթացի ենթակա՝ նախագծային փոփոխությունների համար ընթացակարգի առկայություն: Հանքարդյունահանող ընկերությունը 90% կազատվի ոչ էական արտադրական փոփոխությունների դեպքում ամբողջական ՇՄԱԳ գործընթացից 30% կնվազի ծանրաբեռնվածությունը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն իրականացնող և այդ գործընթացին առնչություն ունեցող պետական լիազոր մարմինների ծանրաբեռնվածությունը, ինչի արդյունքում հնարավոր կլինի նաև իրականացնել առկա ռեսուրսների | Շրջակա միջավայրի նախարարություն | 2024 թվականի սեպտեմբերի 1-ին տասնօրյակ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | օպտիմալ բաշխում<br>Ազդեցությունների ճշգրիտ գնահատում | | |
| 7 | Սահմանել առանձին ընթացակարգեր և գործունեության կատեգորիաներ մետաղական, պինդ ոչ մետաղական և հանքային ջրերի ՇՄԱԳ գործընթացների համար | «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (03.05.2023թ. փոփոխությամբ) նախատեսված՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» կարգը սահմանող իրավական ակտի նախագծով տնտեսական գործունեության առանձին տեսակների համար տարբեր ՇՄԱԳ ընթացակարգերի նախատեսում: | Տնտեսական գործունեության առանձին տեսակների համար տարբեր (պարզեցված) ՇՄԱԳ ընթացակարգերի առկայություն:<br>Ըստ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության աստիճանի ընթացակարգերի 100% տարբերակում և պարզեցում ՇՄԱԳ իրականացնող և այդ գործընթացին առնչություն ունեցող պետական լիազոր մարմինների 60% ռեսուրսների խնայում և օպտիմալ բաշխում<br>Շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության գործընթացի պարզեցում | Շրջակա միջավայրի նախարարություն | 2024 թվականի հունվարի 3-րդ տասնօրյակ |
| 8 | 1. Մեծացնել ՇՄԱԳ փորձաքննություն իրականացնող լիազոր մարմնի կարողությունները՝<br>• ոլորտային բարձր որոկավորում ունեցող մասնագետների ներգրավում<br>Առկա մասնագետների վերապատրաստում՝ հաշվի առնելով ռազմավարությամբ սահմանված փոփոխությունները | ՇՄԱԳ փորձաքննություն իրականացնող ոլորտային բարձր որոկավորում ունեցող մասնագետների վերապատրաստում | մասնագիտական/բնապահպանական տեղեկացվածության բարձրացում և հմտությունների զարգացում<br>ՇՄԱԳ հաշվետվությունների փորձաքննության իրականացման որակի և արդյունավետության բարձրացում 80% և ՇՄԱԳ թե դրական և թե բացասական եզրակացություններից հանրության և ընդերքօգտագործողների դժգոհության նվազում 60%-ով, | Շրջակա միջավայրի նախարարություն | 2024 թվականի հուլիսի 1-ին տասնօրյակ<br><br>Մասնագետների վերապատրաստում՝ առնվազն տարին մեկ անգամ |
| 3.2 Շրջակա միջավայրի պահպանության և երկարաժամկետ հողօգտագործման համատեքստում հանքերի պատշաճ փակման և այլ խախտված տարածքների, ներառյալ՝ ընդերքօգտագործման թափոնների պատշաճ վերականգնման և ռեկուլտիվացիայի ապահովում | | | | | |
| Խնդիր՝ Երկարաժամկետ նախագծերի դեպքում ռեկուլտիվացիոն աշխատանքների ողջ ծավալը վերջում թողնելու և ռիսկերի կառավարման խնդիրներից խուսափելու նպատակով արդեն չշահագործվող հատվածների համար ընթացիկ ռեկուլտիվացիոն աշխատանքների և դրանց իրականացման պլան-ժամանակացույցի վերանայման պահանջի, այդ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերահաշվարկների իրականացման ժամկետների և մեթոդների սահմանման անհրաժեշտություն | | | | | |
| 3.2.1 | Մշակել միջազգային լավագույն փորձին համահունչ հանքերի փակման ծրագրերի կազմման ուղեցույց՝ հաշվի առնելով ՀՀ առանձնահատկությունները, որը կներառի փակումից հետո հանքի և/կամ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կայունության գնահատման պարտադիր պահանջ | Շրջակա միջավայրի նախարարի 2022թ. հոկտեմբերի 25-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները հաստատելու մասին» N369-Ն հրամանում լրացումներ և փոփոխություններ նախատեսող հրամանի հավելված հանդիսացող ուղեցույցի մշակում | Հանքերի փակման ծրագրերի կազմման ուղեցույցի առկայություն:<br>Շրջակա միջավայրի նախարարի 2022թ. հոկտեմբերի 25-ի N369-Ն հրամանի փոփոխությամբ պայմանավորված ուղեցույցի առկայություն | Շրջակա միջավայրի նախարարություն,<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 2024 թվականի մայիսի 1-ին տասնօրյակ |
| 3.2.2 | Իրականացնել փակված/չգործող հանքերի և լքված/տիրազուրկ ընդերքօգտագործման թափոնների բնապահպանական ազդեցությունների գնահատում և առավել խնդրահարույց կետերի (hot-spot-ների) հստակեցում և համապատասխան հաշվետվության կազմում, որը պարտադիր կերպով կներառի | Փակված/չգործող հանքերի և լքված/տիրազուրկ ընդերքօգտագործման թափոնների բնապահպանական ազդեցությունների գնահատման և առավել խնդրահարույց կետերի (hot-spot-ների) հստակեցման նպատակով ուսումնասիրությունների ու վերլուծությունների իրականացում և հաշվետվության կազմում | Բացահայտված ազդեցությունների մեղմացման և երկարաժամկետ հողօգտագործման ենթատեքստում տարածքների վերականգնման միջոցառումներ ներառող փաստաթղթի առկայություն: | Շրջակա միջավայրի նախարարություն,<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների | 2025 թվականի հուլիսի 1-ին տասնօրյակ<br><br>Սույն բաժնի 1-ին միջոցառման իրականացումից հետո |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | բացահայտված ազդեցությունների մեղմացման և երկարաժամկետ հողօգտագործման ենթատեքստում տարածքների վերականգնման միջոցառումներ | | | նախարարություն | |
| 3.2.3 | Մշակել ֆինանսական աղբյուրների հայթայթման և ըստ առաջնահերթության 2-րդ կետում նշված հանքավայրերի փակման և տարածքների վերականգնման ծրագիր | Փակված/չգործող հանքերի և լքված/տիրազուրկ ընդերքօգտագործման թափոնների փակման/վնասազերծման ծրագրի մշակում: | Վերականգնված և հետագա օգտագործման համար պիտանի տարածքների քանակի ավելացում: | Շրջակա միջավայրի նախարարություն<br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, | 2026 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ<br><br>Սույն բաժնի 1-ին և 2-րդ միջոցառումների իրականացումից հետո |
| 3.2.4 | Սահմանել միջազգային փորձին համահունչ ջրերի մաքրման համակարգերի ներդրման պահանջ ոչ միայն փակված/չգործող հանքավայրերի ու լքված/տիրազուրկ ընդերքօգտագործման թափոնների, այլև գործողների տարածքների բնապահպանական բացասական ազդեցության չեզոքացման համար, օրինակ՝ passive treatment systems, հատկապես թթվային դրենաժի ներուժ ունեցող հանքավայրերի համար | Հանքավայրերի ու ընդերքօգտագործման թափոնների տարածքների վրա բնապահպանական վնասակար ազդեցության մեղմման կամ չեզոքացման նպատակով ջրերի մաքրման համակարգերի ներդրման ուղղությամբ պահանջների սահմանում | Հանքավայրերի ու ընդերքօգտագործման թափոնների տարածքների վրա բնապահպանական վնասակար ազդեցության նվազեցում: | Շրջակա միջավայրի նախարարություն | 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 3.2.5 | Հանքի շահագործման ընթացքում դիտարկել ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների երկարաժամկետ տեղադրման տարածքների աստիճանական (փուլային) ռեկուլտիվացիան և ստեղծել կարողություններ փուլային ռեկուլտիվացիայի պատշաճ իրականացման նկատմամբ վերահսկողության համար | ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների երկարաժամկետ տեղադրման տարածքների աստիճանական (փուլային) ռեկուլտիվացիայի իրականացման կարգի/ուղեցույցի մշակում | Ռեկուլտիվացիոն աշխատանքների պատշաճ վերահսկողության իրականացում, առկա բացերի ժամանակին բացահայտում և վերականգնված տարածքների երկարաժամկետ կայունության ապահովում | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին | Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերում անհրաժեշտ փոփոխություններ՝<br><br>2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ<br><br>Կարողությունների զարգացում՝ 2025 թվականի հուլիսի 1-ին տասնօրյակ |
| 3.2.6 | Ստեղծել մեխանիզմներ ՀՀ Կառավարության և ներկայում գործող ընդերքօգտագործող կազմակերպությունների միջև համագործակցության համար՝ ձևավորելով համատեղ աշխատանքային խումբ և սահմանել սույն ռազմավարությամբ նախատեսվող փոփոխությունների իրականացման ժամանակացույց և չափորոշիչներ | Համատեղ աշխատանքային խմբի ստեղծում՝ սույն ռազմավարությամբ նախատեսվող փոփոխությունների իրականացման ժամանակացույցի և չափորոշիչների սահմանման նպատակով | Մասնակցային գործընթացի ապահովում | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Շրջակա միջավայրի նախարարություն,<br><br>ընդերքօգտագործող ընկերություններ | 2024 թվականի հունիսի 1-ին տասնօրյակ |
| 3.2.7 | Մշակել առանձին ուղենիշներ/ուղեցույցներ ստորգետնյա | Շրջակա միջավայրի նախարարի 2022թ. հոկտեմբերի 25-ի | Ստորգետնյա և բաց եղանակով | Շրջակա միջավայրի | 2025 թվականի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | և բաց եղանակով շահագործվող հանքերի փակման և տարածքների վերականգնման համար | «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները հաստատելու մասին» N369-Ն հրամանում լրացումներ և փոփոխություններ նախատեսող հրամանի հավելված հանդիսացող ստորգետնյա և բաց եղանակով շահագործվող հանքերի փակման և տարածքների վերականգնման համար ուղեցույցի մշակում | շահագործվող հանքերի փակման և տարածքների վերականգնման համար համապատասխան ուղեցույցների առկայություն: | նախարարություն,<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 3.2.8 | Ստեղծել հնարավորություն ժառանգություն մնացած (լքված) հանքերի և ընդերքօգտագործման թափոնների համաֆինանսավորմամբ (պետություն-մասնավոր ընկերություն) մաքրելու և (կամ) վերամշակելու համար<br>• Գնահատել ընդերքօգտագործման թափոնների (մասնավորապես՝ պոչանքների) վերամշակման նպատակահարմարությունը՝ ելնելով ընդերքօգտագործման թափոններում առկա օգտակար բաղադրիչների պարունակությունից՝ հաշվի առնելով նոր պոչամբարի համար համապատասխան մակերեսով լրացուցիչ տարածքի հատկացման անհրաժեշտությունը:<br>• Գնահատել լքված/տիրազուրկ պոչամբարներում առկա պոչանքների պարունակությունը՝ որպես պոտենցիալ ակտիվներ՝ թափոններից տարբերակելու ենթատեքստում<br>• Կազմել վերամշակման ենթակա ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների ռեեստր ըստ վերամշակման առաջնահերթության<br>• Իրականացնել ծախս-օգուտ վերլուծություն առկա պոչամբարների բնապահպանական իրավիճակի բարելավման և նոր ստեղծվող պոչամբարի բնապահպանական և գեոտեխնիկական բարձր չափանիշների ապահովման ենթատեքստում<br>ՇՄԱԳ գործընթացում սահմանել պոչամբարի կայունության գնահատման պահանջ՝ դրա վերամշակման ընթացքում պոչանքի «արդյունահանման տեխնոլոգիայի» ընտրության վերաբերյալ որոշման կայացման համար | Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների ռեեստրի (ըստ վերամշակման առաջնահերթության) կազմում, համապատասխան իրավակարգավորումների մշակում, իրականացված գնահատումների արդյունքում առաջարկությունների ներկայացում | Ընդերքօգտագործման թափոններում առկա օգտակար բաղադրիչների կորզվող քանակի ավելացում 60%<br>Բնապահպանական տեսակետից աղետալի վիճակում գտնվող ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների տարածքների 90% պատշաճ ռեկուլտիվացիա և վերականգնում՝ երկարաժամկետ հեռանկարում 70% տարածքների այլընտրանքային նպատակներով օգտագործման համար<br>Հողային շերտի խախտման ենթակա տարածքի հնարավոր կրկնապատկում | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Շրջակա միջավայրի նախարարություն,<br><br>Պետական եկամուտների կոմիտե | 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| Խնդիր՝ Ֆինանսական ապահովագրություն և այլ մեխանիզմների մշակման անհրաժեշտություն ոլորտին առնչվող բացասական ազդեցությունների կանխարգելման և վնասի փոխհատուցման համատեքստում | | | | | |
| 3.2.9 | Իրականացնել ֆինանսական երաշխիքների հիմնարար սկզբունքների իմպլեմենտացում և ամրագրել ոլորտային միջազգային չափանիշները օրենսդրական մակարդակով | Իրավական ակտերի մշակում | Երաշխիքային համակարգի ներդրում<br><br>Հանքարդյունաբերության ոլորտում բարելավված և գործուն, միջազգային լավագույն փորձին համահունչ կարգավորումներ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Շրջակա միջավայրի նախարարություն, | 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 3.2.10 | Ներդնել ընթացիկ ռեկուլտիվացիայի և փակման միասնական երաշխիքային համակարգ | | | | 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 3.2.11 | Օրենսդրությամբ ամրագրել ֆինանսական երաշխիքների | | | | 2025 թվականի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ապահովման գործընթացը՝ ներառյալ սուբյեկտները, անհրաժեշտ պայմանները և վճարման դեպքերը | | | | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 3.2.12 | Վերանայել փակման ծրագրերի պահանջները (հիմքեր, սուբյեկտներ, պայմանները) | | | | 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 3.3 Կրթության, գիտության, շրջակա միջավայրի պահպանության և ֆինանսատնտեսական ոլորտների հետ համակարգված համագործակցություն | | | | | |
| Խնդիր՝ Մասնագիտական կարողությունների զարգացում և կրթություն | | | | | |
| 1 | Ներդնել պետական համակարգի կարողությունների զարգացման ծրագրեր՝ ընդերքաբանական, տեխնիկական անվտանգության և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննությունների, տեսչական, պետական վերահսկողության հնարավորությունների՝ մասնագետների վերապատրաստմամբ, նոր տեխնոլոգիաների ներդրմամբ, լաբորատոր և տեխնիկական այլ սարքավորումների հագեցվածության ապահովմամբ | Պետական համակարգի աշխատակիցների մասնագիտական անհրաժեշտ գիտելիքների բարձրացման և կարողությունների զարգացման ծրագրերի իրականացում: | Պետական մարմինների աշխատակիցների կարողությունների զարգացում | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Շրջակա միջավայրի նախարարություն,<br><br>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | 2026 թվականի հունիսի 1-ին տասնօրյակ |
| 2 | Ցուցաբերել աջակցություն կրթական համակարգում ըստ պահանջարկի ոլորտային մասնագետների պատրաստման հիմնահարցերին | Համակարգում ըստ պահանջարկի ոլորտային մասնագետների պատրաստման հիմնահարցերին աջակցություն | Ոլորտային մասնագետների առկայության ապահովում | | |
| 3 | Զարգացնել համագործակցության ուղղությունները հանքարդյունաբերության ոլորտի լիազոր մարմնի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, հանքարդյունաբերական ոլորտի ընկերությունների ասոցիացիաների, միջազգային կազմակերպությունների միջև՝ ոլորտային իրավական ակտերի մշակման գործընթացում գիտական ներուժի օգտագործման, ոլորտային մասնագետների, ուսանողների և ընդերքօգտագործողների միջև համագործակցության հարթակի ստեղծման նպատակով | Համագործակցության հարթակի ստեղծում | Մասնակցային գործընթացի ապահովում | | |
| **ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 3. Հանքարդյունաբերության ոլորտում միջազգային ստանդարտների և մոտեցումների կիրառում** | | | | | |
| Թիրախային ուղղություն 3.1. Հանքարդյունաբերության, շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացման միջազգային ստանդարտների կիրառում և արդյունավետ մոդելի մշակում | | | | | |
| Խնդիր՝ Պոչամբարների կառավարման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանների պահանջի, օբյեկտների սպասարկման համար պատասխանատուների պահանջի սահմանման հիմնախնդիրներ, արտադրական վտանգավոր օբյեկտների ցանկում ընդգրկման հարցը | | | | | |
| 1. | Հիդրոտեխնիկական կառուցվածքների (այդ թվում պոչամբարների) նախագծման, կառուցման, վերակառուցման, քանդման/ապամոնտաժման, կոնսերվացման նորմատիվ պահանջները համալրել նորագույն տեխնոլոգիական լուծումներով՝ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքների համաձայն: | Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքների հիման վրա Հիդրոտեխնիկական կառուցվածքների (այդ թվում պոչամբարների) նախագծման, կառուցման, վերակառուցման, քանդման/ապամոնտաժման, կոնսերվացման նորմատիվ պահանջներում փոփոխությունների իրականացում: | | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Քաղաքաշինության կոմիտե, | 2026 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ<br><br>Վերապատրաստումները պարբերաբար կատարվող |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Նախագծերին ներկայացվող նվազագույն պահանջներում սահմանել, որ պոչամբարային տնտեսության վերջնական փակումը կիրականացվի ընդերքօգտագործողի կողմից, վերջինիս ներկայացրած ֆինանսական երաշխիքների միջոցներով: | | Հանքարդյունաբերության ոլորտում բարելավված և գործուն, միջազգային լավագույն փորձին համահունչ կարգավորումներ | Շրջակա միջավայրի նախարարություն,<br><br>Ներքին գործերի նախարարություն | գործընթացներ են |
| 2.<br><br>3. | 1-ին կետով սահմանված նորմատիվ իրավական փաստաթղթերում սահմանել անցումային ժամանակահատված՝ գործող պոչամբարների անվտանգությանն ուղղված միջոցառումները սահմանված նորմերին համապատասխանեցնելու համար:<br><br>Նոր ենթաօրենսդրական իրավական ակտի մշակում. մշակել, տեղայնացնել, ներդաշնակեցնել ռիսկերի գնահատման ուղեցույցներ ՀՀ համար: | Սահմանված նորմերի իրականացում և դրանց վերահսկում՝ պոչամբարների նախագծային, շահագործական մոնիտորինգային ամբողջական փաթեթների տիրապետում և դրանց պարբերական թարմացում: | | | 2030 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ<br>Կախված պոչամբարների կարգից սահմանվում է իրավական ակտերի կազմման ընթացքում |
| Թիրախային ուղղություն 3.2. Ներդրումային միջավայրի բարելավում | | | | | |
| 1. Հաշվետվողականության և թափանցիկության խթանում | | | | | |
| Խնդիր՝ Թափանցիկության ու հաշվետվողականության, կորպորատիվ վարքագծի բարելավում | | | | | |
| 1 | Ապահովել նոր և գործող հանքերի ՇՄԱԳ փաստաթղթերի լիարժեք թափանցիկությունը | «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (03.05.2023թ. փոփոխությամբ) նախատեսված՝ փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության ծանուցումը և մասնակցության հնարավորությունը ապահովող իրավական ակտի մշակում: | ՇՄԱԳ փաստաթղթերի լիարժեք թափանցիկության ապահովում: | Շրջակա միջավայրի նախարարություն,<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 2024 թվականի հունիսի 1-ին տասնօրյակ |
| 2 | Սահմանել երրորդ կողմի աուդիտի մեխանիզմի կիրառում | Երրորդ կողմի աուդիտի մեխանիզմի ներդրման աշխատանքների իրականացում | Երրորդ կողմի աուդիտի մեխանիզմի առկայություն | | 2027 թվականի հունվարի 2-րդ տասնօրյակ |
| 3 | Պետական կառույցներին տրամադրվող հաշվետվությունների տրամադրման (ԱՃԹՆ և այլ հաշվետվությունների) և հրապարակայնության թափանցիկության ապահովում | Գործող հարթակների գործունեությանն աջակցության ցուցաբերում, համապատասխան տեղեկատվության տրամադրում: | Պետական կառույցներին տրամադրվող հաշվետվությունների տրամադրման (ԱՃԹՆ և այլ հաշվետվությունների) և հրապարակայնության թափանցիկության առկայություն: | | 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 4 | Ապահովել ընկերության կողմից համայնքներում իրականացվող ծրագրերի երկկողմանի թափանցիկություն | Ընկերության կողմից համայնքներում իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության՝ համայնքների պաշտոնական կայքերում հրապարակում: | Ընկերության կողմից համայնքներում իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության առկայություն: | | 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 5 | Ապահովել ընկերությունների հանրային տեղեկատվության հարթակի առկայություն | Ապահովել ընկերությունների հանրային տեղեկատվության հարթակի առկայության և անխափան գործունեության վերաբերյալ կարգավորման ներդրման աշխատանքներ: | Ընկերությունների հանրային տեղեկատվության հարթակի առկայություն և անխափան գործունեություն: | | 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 6 | Ապահովել ԲՍԿ բոլոր տվյալների հրապարակայնությունը ընկերությունների կայքերում | Ընկերությունների կայքերում ԲՍԿ՝ հրապարակման ենթակա տվյալների հրապարակայնության ապահովման աշխատանքներ: | Ընկերությունների կայքերում ԲՍԿ՝ հրապարակման ենթակա տվյալների առկայություն: | | 2025 թվականի հունվարի 2-րդ տասնօրյակ |
| 7 | Սահմանել ԲՍԿ զեկույցների պարտադիր պահանջ | ԲՍԿ զեկույցների պարտադիր պահանջի ներդրման | ԲՍԿ զեկույցների պարտադիր պահանջի | | 2025 թվականի հունվարի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | աշխատանքներ: | առկայություն: | | 2-րդ տասնօրյակ |
| 8 | Սահմանել Միջազգային բնապահպանական, սոցիալական և կլիմայի փոփոխության զեկույցների ներդրման պահանջ | Միջազգային բնապահպանական, սոցիալական և կլիմայի փոփոխության զեկույցների ներդրման պահանջի անհրաժեշտության ուսումնասիրության և ներդրման ուղղությամբ աշխատանքների իրականացում: | Միջազգային բնապահպանական, սոցիալական և կլիմայի փոփոխության զեկույցների ներդրման պահանջի առկայություն: | | 2027 թվականի հունվարի 2-րդ տասնօրյակ |
| 2. Կայուն, կանխատեսելի և գրավիչ ներդրումային միջավայրի ձևավորում | | | | | |
| Խնդիր՝ Ներդրումային գրավիչ միջավայրի ձևավորում հարակից իրավունքների տրամադրման գործընթացի պարզեցման և միմյանց միջև կապերի ստեղծման միջոցով (հողօգտագործման, ջրօգտագործման, արտանետումների իրավունք և այլն) | | | | | |
| 1 | Ներդաշնակեցնել պետական մարմինների գործունեությունը՝ ներդնելով իրավունքների միաժամանակյա տրամադրման ինստիտուտ՝ օրենսդրական մակարդակով | | | | 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 2 | Ներդնել հարակից ոլորտներում համալիր իրավունքների ձեռք բերման պարզեցված գործընթաց՝ հաշվի առնելով այն, որ ողջ տեղեկատվությունը գնահատվում է ՇՄԱԳ փորձաքննության շրջանակներում | | | | 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 3 | Դիտարկել մեկ մարմնի կողմից նշված իրավունքների տրամադրման հնարավորությունը ընդերքօգտագործման իրավունքի հետ միաժամանակ | | | | 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 4 | Ներդաշնակեցնել հարակից ոլորտներում տրամադրվող թույլտվությունների ժամկետները ընդերքօգտագործման թույլտվության ժամկետների հետ | Օրենսդրական փոփոխությունների իրականացում իրավունքների միաժամանակյա տրամադրման ինստիտուտի ներդրման նպատակով | Ներդրումային միջավայրի բարելավում | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 5 | ՇՄԱԳ փորձաքննության գնահատման հարցերի շրջանակը ընդլայնել՝ համապարփակ կերպով գնահատելով նաև ջրօգտագործման և արտանետումների թույլտվության տրամադրման հարցը | | | | 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 6 | Նախատեսել հստակ երաշխիքներ՝ սեփականատերերի խախտված իրավունքների վերականգման համար | | | | 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 7 | Ջրային օրենսգրքով նախատեսված գնահատման ընդհանուր չափանիշների հիման վրա մշակել այն դեպքերը, երբ ընդերքօգտագործման շրջանակներում ջրօգտագործման իրավունքից օգտվելու ընկերության իրավունքը կարող է սահմանափակվել | | | | 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 8 | Սահմանել այն բացառիկ դեպքերը, երբ հարակից իրավունքների տրամադրումը, պայմանավորված ռիսկայնության բարձր մակարդակով, կիրառանացվի ընդհանուր ընթացակարգով | | | | 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9 | Նախատեսել մերժման հիմքերը և գործընթացը | | | | 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 10 | Նոր ներդրումներ ներգրավելու, կոոպորատիվ կառավարումն ամրապնդելու նպատակով միջազգային ֆոնդային բորսաներում ցուցակվելու խթանների ստեծման նպատակով ուսումնասիրության իրականացում և միջոցառումների ծրագրի ներկայացում: | | | Էկոնոմիկայի նախարարություն,<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| <u>Թիրախային ուղղություն 3.3.</u> Արդյունավետ վերահսկողություն ու ընդերքօգտագործման իրավունքների տրամադրման արդար և արդյունավետ համակարգի կիրառում | | | | | |
| Հողօգտագործման իրավունքի տրամադրման և հողերի ձեռքբերման գործընթացների և գործիքակազմի պարզեցում, ինչպես նաև հողօգտագործման և ընդերքօգտագործման գործընթացների ներդաշնակեցում<br>Խնդիր 1. Հանրային և մասնավոր շահի հավասարակշռումը ընդերքօգտագործման համար հողային իրավունքների շրջանակում | | | | | |
| 1. | Ներդնել հողօգտագործման և ընդերքօգտագործման ոլորտում իրավական ներդաշնակ կարգավորումների գործիքակազմ և իրավունքների համալիրի միաժամանակյա տրամադրման մեխանիզմ՝ ուղղված ընկերություն-պետություն-համայնք-սեփականատեր համագործակցության շրջանակներում առկա խնդիրների լուծմանը:<br>Հողի նկատմամբ սեփականության իրավունքի սուբյեկտից (մասնավոր, համայնքային, պետական) կախված ընդերքօգտագործման իրավունքի տրամադրմանը զուգահեռ հողօգտագործման իրավունքի տրամադրման օրենսդրական կարգավորումների մշակում: | Օրենսդրական փոփոխությունների իրականացում հողօգտագործման և ընդերքօգտագործման ոլորտում իրավական ներդաշնակ կարգավորումների գործիքակազմի և իրավունքների համալիրի միաժամանակյա տրամադրման մեխանիզմների ներդրման նպատակով | | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Տեղական ինքնակառավարման մարմիններ | 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 2. | Նախատեսել ՀՀ հողային օրենսգրքով ընդերքօգտագործման ծրագրի իրականացման համար երրորդ անձանց անշարժ գույքի նկատմամբ ընդերքօգտագործման պայմանագրի կնքման պահից ընդերքօգտագործողի հատուցելի սերվիտուտի իրավունք: | ընդերքօգտագործողի հատուցելի սերվիտուտի իրավունքի սահմանման նպատակով իրավական դաշտի կարգավորում | Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման գործընթացում հողային հարաբերությունների կարգավորում | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Տեղական ինքնակառավարման մարմիններ | 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 3. | Սահմանել պարզեցված ընթացակարգեր հողամասի նպատակային նշանակության փոփոխության համար անհրաժեշտ փաստաթղթերը դիմումի հետ միասին ներկայացնելու համար | Հողամասի նպատակային նշանակության փոփոխության համար պարզեցված ընթացակարգերի սահմանման նպատակով իրավական դաշտի կարգավորում | | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,<br><br>Տեղական ինքնակառավարման մարմիններ | 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 4. | Սահմանել վնասների հատուցման գործիքակազմ և հատուցման չափի որոշման չափանիշներ | Վնասների հատուցման գործիքակազմի և հատուցման չափի որոշման չափանիշների սահմանման նպատակով իրավական դաշտի կարգավորում | | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, | 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Տեղական ինքնակառավարման մարմիններ | |
| 5. | Սահմանել պետական մասնակցության համար անհրաժեշտ սկզբունքները, պայմաններն ու մեխանիզմները՝ արդյունավետ վերահսկողության իրականացման համատեքստում | Շահագրգիռ նախարարությունների կողմից հանքարդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների նկատմամբ վերահսկողության քաղաքականության (կամ սկզբունքների) մշակում | Պետության կողմից արդյունավետ, ոչ դեպքեսիվ և թափանցիկ վերահսկողության մեխանիզմների ձևավորում | Էկոնոմիկայի նախարարություն,<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 2024 թվականի հուլիսի 1-ին տասնօրյակ |